ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » մայիսի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-104-12.04.2019-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի ապրիլի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 469 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-104-12.04.2019-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն անհրաժեշտ է համարում նշել, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի հիմնավորումը հանգում է երկու օրենքների միջև հակասությունը վերացնելուն: Մինչդեռ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի կարգավորման առարկան զինվորական ծառայության ժամկետի հաշվարկն է, իսկ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի կարգավորման առարկան զինվորական ծառայության ստաժի հաշվարկն է:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 66-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն արդարացված է այն անձը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել կամ քրեական գործով վարույթը կարճվել է սույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով և 2-րդ մասով նախատեսված որևէ հիմքով, կամ որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ: Օրենսգրքի՝ համապատասխանաբար 1-ին մասի 1-3-րդ կետերի և 2-րդ մասի համաձայն՝

1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝

1) բացակայում է հանցագործության դեպքը.

2) արարքի մեջ հանցակազմ չկա.

3) վնաս պատճառած արարքը քրեական օրենքով համարվում է իրավաչափ:

2. Քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, իսկ գործի վարույթը ենթակա է կարճման՝ կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում, եթե սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթների կարգավորիչ իմաստը կայանում է նրանում, որ օրենքի ուժով զինվորական ծառայության ժամկետում չհաշվարկվող՝ նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն ազատազրկման կամ կալանքի ձևով պատիժը կրելու կամ ձերբակալման կամ որպես խափանման միջոց կիրառված կալանավորման ժամանակահատվածները ենթակա են հաշվարկման զինծառայողի զինվորական ծառայության ժամկետում միայն այն դեպքում, եթե զինծառայողը ձեռք է բերել արդարացվածի կարգավիճակ: Նշված կարգավորման համար հիմք են ծառայել օրենսգիրքի 66-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 8-րդ մասերի և, հատկապես, 8-րդ մասի 2-րդ կետի դրույթները, որոնց համաձայն արդարացվածն իրավունք ունի նաև ազատազրկման, կալանքի կամ ազատության սահմանափակման ձևով պատիժը կրելու, ինչպես նաև կարգապահական գումարտակում պահվելու ժամանակը բոլոր տեսակի աշխատանքային ստաժերի մեջ հաշվակցելը:

Տվյալ պարագայում, առաջարկվող լրացումը ենթադրում է զինվորական ծառայության ստաժի հաշվարկում նաև օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի մյուս կետերով նախատեսված հիմքերով քրեական գործը կարճելու դեպքերում, ինչը խաթարում է օրենքի կարգավորիչ իմաստը, ինչպես նաև ոչ իրավաչափ հավասարություն է դնում արդարացվածի և այդպիսի կարգավիճակ չունեցողի միջև:

Ելնելով վերոգրյալից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով քննարկվող գործող օրենքի 7-րդ հոդվածը թողնել անփոփոխ:

Վերը նշված հիմնավորումները վերաբերում են նաև «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվող փոփոխությանը: Միաժամանակ, հաշվի առնելով, որ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը փաստացի կրկնում է օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի ու 2-րդ մասի դրույթները, սակայն անհասկանալի պատճառով չի ներառում նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, ինչպես նաև ներկայացված երկու օրենքների միջև համապատասխանությունն ապահովելու նպատակով առաջարկում ենք «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) ազատազրկման կամ կալանքի ձևով պատիժ կրելու կամ ձերբակալման կամ որպես խափանման միջոց կիրառված կալանավորման կամ աքսորի ժամանակահատվածները, եթե զինծառայողն օրենքով սահմանված կարգով ձեռք է բերել արդարացվածի կարգավիճակ:»:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքների նախագծերի ընդունման դեպքում համապատասխան փոփոխություններ կկատարվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ (N 2 հավելվածի 30-րդ կետ և N 3 հավելվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետ):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ապրիլի 2019 թվականի N 469 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Գաբրիել Բալայանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-104-12.04.2019-ՊԱ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. ապրիլի 29
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-104-12.04.2019-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ կետը «ձեռք է բերել արդարացվածի կարգավիճակ» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ.

«կամ ընդունվել է քրեական գործը կարճելու մասին որոշում: » :

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-104[1]-12.04.2019-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասում 3) կետից հանել «՝ հանցագործության դեպքի, հանցակազմի բացակայության կամ հանագործության կատարմանը մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու պատճառով» բառերը :

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Զինվորական ծառայության ժամկետը հաշվարկելու կարգը սահմանվում է մի կողմից «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, մյուս կողմից զինվորական ծառայության ստաժում հաշվառվող ժամանակահատվածները և դրանք հաշվարկելու առանձնահատկությունները կարգավորվում են «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով: Եվ այստեղ առաջանում է երկու օրենքների միջև հակասություն. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով զինծառայողի համար որպես զինվորական ծառայության ժամկետ է հաշվարկվում այն ժամանակահատվածը, երբ զինծառայողը ազատազրկման կամ կալանքի ձևով պատիժ է կրել և ձեռբակալման կամ որպես խափանման միջոց կիրառված կալանավորման ժամանակահատվածը, եթե օրենքով սահմանված կարգով զինծառայողը ձեռք է բերել արդարացվածի կարգավիճակ: Իսկ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով վերը թվարկված դեպքերը նույնպես հաշվարկվում են ստաժ, բայց այս օրենքում կա հավելում, ըստ որի զինվորական ծառայության ստաժում է հաշվարկվում վերոնշյալ դեպքերը և, երբ ընդունվել է քրեական գործը կարճելու մասին որոշում և բերված են քրեական գորրծի կարճման մի քանի մասնավոր դեպքեր, որը բացակայում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով: Անմեղության կանխավարկածի վրա հիմնվելով՝ արդարացի կլիներ հանել քրեական գործի կարճման մասնավոր դեպքերը «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում և ընդհանրացնել այն, քանի որ եթե անձը չի դատապարտվել, նշանակում է՝ նա անմեղ է, իսկ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում ավելացնել նաև քրեական գործը կարճելու մասին որոշման դրույթը, որը և տեղի է ունենում սույն օրենսդրական նախաձեռնությամբ: Քանի որ կան արդեն նախադեպեր, երբ ՀՀ Զինված ուժերի գլխավոր շտաբի կողմից տրված տեղեկանքում հաշվարկված ընդհանուր ստաժը և տվյալները չեն համապատասխանել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրված փաստաթղթում ներկայացված տվյալներ հետ և հետևաբար չի հաշվարկվել համապատասխան կենսաթոշակ: